



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«27» 02 2013թ

№ 1/17.1/1543-13

Հ Ր Ա Մ Ա Ն N176Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության ուղղակարական պլանավորման, քաղաքական որոշումների ընդունման, կառավարման արդյունավետության բարձրացման և այլ հարցերը քննարկելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N531-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 8.1-րդ կետով, 13-րդ կետի 4-րդ և 18-րդ ենթակետերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին կից կոլեգիայի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին կից կոլեգիայի կազմը հաստատելու մասին» N96-Ա հրամանը:
3. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Ա.ԵՐԻՑՅԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԿՈԼԵԳԻԱՅԻ

1. Կոլեգիայի նախագահ՝ Ա. Երիցյան-Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարար.

2. Կոլեգիայի անդամներ՝

1) Հ. Մխիթարյան-ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ.

2) Հ. Հակոբյան-ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) աշխատակազմի ղեկավար.

3) փ/ծ գեներալ-մայոր Ս. Ազարյան-ՀՀ ԱԻՆ աշխատակազմի Փրկարար ծառայության տնօրեն.

4) Ս. Շահինյան-ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական ռեզերվների գործակալության պետ.

5) Ա. Մկրտչյան-ՀՀ ԱԻՆ աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության պետ.

6) Հ. Պետրոսյան-ՀՀ ԱԻՆ աշխատակազմի «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության պետ.

7) Ա. Պետրոսյան-ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրեն.

8) Լ. Վարդանյան-ՀՀ ԱԻՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն.

9) Ռ. Հովսեփյան-ՀՀ ԱԻՆ «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն.

10) փ/ծ գնդապետ Հ. Մաթևոսյան-ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի տնօրեն (ռեկտոր).

3. Կոլեգիայի քարտուղար՝ Ա. Գրիգորյան-ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ: